ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը պատմություն առարկայի ուսուցման մեջ

Կատարող՝ Հունոյան Լիլիթ Թորգոմի

/անուն, ազգանուն, հայրանուն/

«Գյումրու թիվ 30 հիմն. դպրոց »ՊՈԱԿ պատմության ուսուցիչ

/դպրոց, մասնագիտությունն ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

/անուն,ազգանուն /

ԳՅՈՒՄՐԻ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ1 *Քննադատական մտածողության էությունը և նշանակությունը* 4

Գլուխ 2 *Քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում* 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

Օգտագործված գրականություն 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շատ դժվար է ժամանակակից աշակերտներին դրդել ճանաչողական գործունեության՝ տեղեկատվության և հաղորդակցության նպատակին հասնելու ուղի գտնելու համար: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ երեխաները լուրջ դժվարություններ են ունենում դպրոցական առարկաներից ուսումնական նյութի ընկալման հարցում: Սրա պատճառը մտածողության զարգացման ոչ բարձր մակարդակն է և, առաջին հերթին, քննադատական մտածողության:

Քննադատական մտածողությունը մարդու կարողությունն է օբյեկտիվորեն գնահատելու սեփական և այլ մարդկանց մտքերը, ուշադիր և համակողմանիորեն ստուգելու բոլոր առաջադրված դիրքորոշումներն ու եզրակացությունները:

Թեման արդիական է քանի, որ քննադատական մտածողությունը օգնում է մարդուն որոշել իր առաջնահերթությունները անձնական և մասնագիտական կյանքում: Ենթադրում է անհատական պատասխանատվության ընդունում կատարած ընտրության համար, բարձրացնում է տեղեկատվության հետ աշխատելու անհատական մշակույթի մակարդակը, ձևավորում է վերլուծելու և ինքնուրույն եզրակացություններ անելու, սեփական որոշումների հետևանքները կանխատեսելու և դրանց համար պատասխանատու լինելու կարողությունները:

Թեմայի նպատակն է ուսումնասիրել սովորողների քննադատական մտածողության զարգուցումը պատմություն առարկայի ուսուցման մեջ: Աշխատանքում առաջադրվել է հետևյալ խնդիրը, ինչպե՞ս զարգացնել քննադատական մտածողությունը պատմության դասերին:

Աշխատանքի կառուցվածքն իր մեջ ներառում է ներածություն, երկու գլուխներ, եզրակացություն և օգտագործված գրականություն:

Գլուխ1 *Քննադատական մտածողության էությունը և նշանակությունը*

Քննադատական մտածողությունը ապացույցների համակարգ է, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները[1]:

20-րդ դարի սկզբին առաջին անգամ քննադատական մտածողությունը դիտարկվել է որպես կրթական նպատակ փիլիսոփա Ջոն Դյուիի կողմից, որը «քննադատական մտածողություն» հասկացության փոխարեն առավել հաճախ կիրառում էր «անդրադարձական մտածողություն» հասկացությունը[2]: Ջ. Դյուին այն սահմանում էր որպես «ցանկացած գաղափարի կամ ենթադրյալ գիտելիքի ակտիվ, համառ և հետևողական քննարկում, որն իրականանում է այդ գիտելիքի վերլուծության հիմքով, և որը միտված է հետագա եզրակացությունների հանգելուն»:

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում, թերևս, չկա[3]: Հայերենում խնդիրն առավել բարդ է, քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից, և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ: Այսպես, հայերենում «քննադատական մտածողությունը» ենթադրում է պարտադիր քննադատություն և անհամաձայնություն խնդրի առարկայի շուրջ, մինչդեռ անգլեների «critical thinking» արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում, այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում: Հետևաբար, առավել նպատակահարմար կլիներ, եթե «critical thinking»-ը թարգմանվեր «քննողական մտածողություն»:

Քննադատական մտածողությունն կարել է ասել ունի երկու բաղկացուցիչ մաս՝ առաջինը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը:

---

[1] http://evolkov.net/critic.think/basics/delphi.report.html 25.09.22

[2] Dewey J., How we think, Boston, 1910

[3] Ա. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, 2012

Քննադատական մտածողությունը մարդու ինտելեկտուալ գործունեության տեսակներից մեկն է, որը բնութագրվում է ընկալման, ըմբռնման, իրեն շրջապատող տեղեկատվական դաշտի նկատմամբ մոտեցման բարձր մակարդակով[4]:

Ինչպե՞ս կարելի է սահմանել քննադատական մտածողությունը: Դեյվիդ Քլուսթերը առաջարկում է հինգ կետ, որոնք սահմանում են այս հայեցակարգը՝[5]

1.Նախ, քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Երբ դասը հիմնված է քննադատական մտածողության սկզբունքների վրա, յուրաքանչյուրը մյուսներից անկախ ձևակերպում է իր գաղափարները, գնահատականներն ու համոզմունքները: Ոչ ոք չի կարող մեզ համար քննադատաբար մտածել, մենք դա անում ենք բացառապես մեզ համար: Ուստի մտածողությունը կարող է լինել քննադատական միայն այն դեպքում, երբ այն ունի անհատական բնույթ: Աշակերտները պետք է բավականաչափ ազատություն ունենան ինքնուրույն մտածելու և նույնիսկ ամենադժվար հարցերը ինքնուրույն լուծելու համար: Այսպիսով, ինքնուրույնությունը քննադատական մտածողության առաջին և ամենակարևոր բնութագրիչն է:

2. Տեղեկատվությունը քննադատական մտածողության ելակետն է, ոչ թե վերջնակետը: Գիտելիքը մոտիվացիա է ստեղծում, առանց որի մարդը չի կարող քննադատաբար մտածել: Քննադատական մտածել հնարավոր է ցանկացած տարիքում՝ դրա համար բավականաչափ կենսափորձ ու գիտելիքներ ունեն ոչ միայն բարձր դասարանի աշակերտները, այլև առաջին դասարանցիները: Իհարկե, երեխաների մտածողության կարողություններն ավելի կզարգանան մարզումների ընթացքում, բայց նույնիսկ փոքր երեխաները կարողանում են քննադատորեն և բավականին ինքնուրույն մտածել: Իրենց ճանաչողական գործունեության ընթացքում աշակերտներն ու ուսուցիչները քննադատական արտացոլման են ենթարկում յուրաքանչյուր նոր փաստ: Քննադատական մտածողության շնորհիվ է, որ ճանաչողության ավանդական գործընթացը ձեռք է բերում անհատականություն և դառնում իմաստալից, շարունակական և արդյունավետ:

3. Քննադատական մտածողությունը սկսվում է հարցեր տալուց և լուծելու կարիք ունեցող խնդիրների պարզաբանումից: Մարդիկ իրենց բնույթով հետաքրքրասեր են: Մենք նոր բան ենք նկատում և ուզում ենք իմանալ, թե դա ինչ է: Ինչպես նշում է Ջոն Բինն աշակերտներին քննադատական մտածողություն ուսուցանելու հիմնական նպատակն է օգնել նրանց ուսումնասիրել մեզ շրջապատող խնդիրների անվերջ բազմազանությունը: Բրազիլացի մանկավարժ Պաուլո Ֆրեյրը կարծում է, որ դասավանդումը շատ ավելի

[4] Кабанова – Меллер Е.Н. Формирование приёмов умственной деятельности умственного развития учащихся. – М.: Просвещение, 1968

[5] Клустер Д. Что такое критическое мышление.—М. : ЦГЛ, 2005.

հաջող կլինի, եթե աշակերտները սեփական կյանքի փորձի հիման վրա ձևակերպեն խնդիրները, այդ թվում՝ տնտեսական, սոցիալական ու քաղաքական, և հետո լուծեն դրանք՝ օգտագործելով դպրոցի ընձեռած բոլոր հնարավորությունները: Ֆրեյրը հատուկ ուշադրություն է դարձնում անձի զսպմանը:

4. Քննադատական մտածողությունը փնտրում է համոզիչ հիմնավորում: Քննադատաբար մտածողը գտնում է խնդրի իր լուծումը և հիմնավորում է այդ լուծումը ողջամիտ, հիմնավոր փաստարկներով: Նա նաև տեղյակ է, որ նույն խնդիրն այլ լուծումներ ևս ունի, և փորձում է ապացուցել, որ իր ընտրած լուծումն ավելի տրամաբանական ու ռացիոնալ է, քան մյուսները: Փաստարկներից յուրաքանչյուրն իր հերթին հիմնավորված է ապացույցներով: Որպես ապացույց կարող են օգտագործվել վիճակագրական տվյալները, հատվածները տեքստից, անձնական փորձը և ընդհանրապես այն ամենը, ինչ խոսում է այս փաստարկի օգտին և կարող է ընդունվել քննարկման մյուս մասնակիցների կողմից: Փաստարկը հաղթում է, եթե հաշվի է առնում հնարավոր հակափաստարկների առկայությունը, որոնք կա՛մ վիճարկվում են, կա՛մ թույլատրելի են ճանաչվում: Այլ տեսակետների ճանաչումը միայն ուժեղացնում է փաստարկը:

5. Քննադատական մտածողությունը սոցիալական մտածողությունն է: Յուրաքանչյուր միտք փորձարկվում և զտվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ: Երբ մենք վիճում ենք, կարդում, քննարկում, առարկում և կարծիքներ ենք փոխանակում այլ մարդկանց հետ, մենք ճշգրտում և խորացնում ենք մեր սեփական դիրքորոշումը: Հետևաբար, քննադատական մտածողությանը համահունչ աշխատող ուսուցիչները միշտ փորձում են իրենց դասերին օգտագործել բոլոր տեսակի զույգերով և խմբային աշխատանքներ, ներառյալ բանավեճերն ու քննարկումները, ինչպես նաև աշակերտների գրավոր աշխատանքի տարբեր տեսակների հրապարակումը:

Քննադատական մտածողությանը համահունչ աշխատող ուսուցիչները մեծ ուշադրություն են դարձնում կարծիքների արդյունավետ փոխանակման համար անհրաժեշտ որակների ձևավորմանը՝ հանդուրժողականություն, ուրիշներին լսելու կարողություն և սեփական տեսակետի համար պատասխանատվություն: Այսպիսով, ուսուցիչներին հաջողվում է ուսումնական գործընթացը շատ ավելի մոտեցնել իրական կյանքին, որը տեղի է ունենում դասասենյակի պատերից դուրս: Ցանկացած մանկավարժական գործունեություն, ի վերջո, ուղղված է հասարակության կերտմանը, և այս առումով նույնիսկ քննադատական մտածողության հիմունքներով պատրաստված դպրոցական մեկ դասարանը քայլ է դեպի մեծ նպատակներ:

Ռոբերտ Էննիսը իր՝ «Քննադատական մտածողության գնահատումը» հոդվածում նշում է, որ քննադատաբար մտածելու ժամանակ անհատը, որպես կանոն, իրականացնում է հետևյան քայլերը[6]՝

- գնահատում է ինֆորմացիայի աղբյուրի հավաստիությունը,
- վեր է հանում եզրակացությունները, պատճառները և ենթադրությունները,
- գնահատում է փաստարկի որակը՝ հաշվի առնելով ներկայազված հիմնավորումները, ենթադրություններն ու վկայությունները,
- մշակում և պաշտպանում է խնդրի նկատմամբ սեփական դիրքորոշումը,
- հարցերի միջոցով հստակեցնում է խնդիրը,
- փորձարկում է սեփական դիրքորոշումը,
- եթե անհրաժեշտ է, սահմանում է համապատասխան եզրույթները,
- լինում է լայնամիտ և տեղեկացված, ինչպես նաև, երբ արդեն վստահ է իր տեսակետի մեջ, զգուշավորությամբ, բայց կատարում եզրահանգումներ (Ennis, 1993):

Էննիսի մատնանշած վերոնշյալ քայլերը կարող են ծառայել ամենատարբեր նպատակներին, այդ թվում կարող են հիմք հանդիսանալ քննադատական մտածողությունը չափող թեստ կազմելու, ուսումնական պլան կամ քննադատական մտածողություն զարգացնող հատուկ առարկա մշակելու և այլ նպատակներով:

Քննադատական մտածողության ընթացքում անհրաժեշտ է՝



[6] Ա. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, 2012

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման ընթացքում առանձնացնում են ուսուցման երեք փուլեր՝ խթանում, իմաստավորում, կշռադատում[7]:

Առաջին փուլը մարտահրավեր է, երբ խնդիր է դրվում՝ հետաքրքրել աշակերտին, մոտիվացնել նրան հետագա աշխատանքի համար: Ուսուցիչն հանդես է գալիս ուղղորդողի և սովորողների մտածողությունը խթանողի դերում:

Երկրորդ փուլը նույն ըմբռնման փուլն է: Այս փուլում աշակերտները աշխատանք ենք կատարում տեղեկատվության հետ[8]: Աշակերտների առջև դրված խնդիրների ինքնուրույն լուծումը, սեփական կարծիքները հիմնավորելու և ապացուցելու կարողությունը նպաստում են հետազոտական գործունեության ակտիվացմանը, դասի նկատմամբ ճանաչողական հետաքրքրվածության զարգացմանը:

Երրորդ փուլում տեղեկատվությունը վերլուծվում, մեկնաբանվում, ստեղծագործաբար մշակվում է:

[7] https://xn--j1ahfl.xn--p1ai/library/tehnologiya_razvitiya_kriticheskogo_mishleniya_na_uroka_193114.html 27/09/22

[8] КОСТЯКОВ О.С. , Приемы технологии развития критического мышления на уроках истории и обществознания, Республики Крым

Գլուխ 2 *Քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում*

Ինչպես նշեցինք քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է:

Ուսուցիչները կիրառում են տարբեր մեթոդներ աշակերտների քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով: Ներկայացնեմ այդ մեթոդներից մի քանիսը, որոնք կիրառել եմ պատմություն առարկայի դասավանդման ընթացքում:

Քննադատական մտածողության զարգացման նպատակով հաճախ դասապրոցեսի ընթացքում կիրառում եմ վենի դիագրամը:



Գծապատկեր 5 *Վենի դիագրամի կառուցվածքը*[9]

Այս մեթոդի նպատակն է նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելը կամ դրանց ընդհանրությունները ցույց տալ[10]: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, և նշվում են գաղափարների, երևույթների, անձերի ընդհանրությունները, իսկ չհատվող մասերում առանձնացվում և շեշտվում են նրանց առանձնահատկությունները: Այս մեթոդը

[9] Կառուցվել է հեղինակի կողմից
[10] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնաներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ

կիրառում եմ տարբեր ժամանակահատվածներ, թագավորների գործունեություններ, ճակատամարտեր համեմատելիս:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է[11]: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ, ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը, աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները:

Խմբի անդամների առջև կոնկրետ խնդիր է դրվում, նրանցից յուրաքանչյուն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանություն տալու փորձի[12]: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա : Այս մեթոդով աշխատելիս գոյություն ունեն որոշակի կանոններ, դրանք են՝

- **Ցանկացած քննադատության բացակայություն՝** մտքերի ազատ հոսք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ բացակայում է քննադատության վտանգը: Դա կարող է լինել բացահայտ բացասական գնահատականը, քմծիծաղը, կողմնապահությունը: Չի կարելի ցույց տալ, որ որևէ մեկի արտահայտած միտք իմաստ չունի, անտեսել ինչ-որ մեկի կատարած ներդրումը:
- **Գաղափարների խրախուսում՝** պետք է խրախուսել շատ և բազմատեսակ մտքեր արտահայտելը, շեշտը դրվում է արտահայտվող մտքերի քանակի, այլ ոչ թե որակի վրա:
- **Մասնակիցների հավասարություն՝** մտքերի տարափը հերթականություն կամ չափ սահմանել չի ենթադրում: Անհրաժեշտ է մտածել ինչ-որ հերթականության մեխանիզմ, որպեսզի մտքերն արտահայտելիս չլինի որևէ մեկի կողմից մտքերի գերակայություն:

Ամբողջ դասարանի մասնակցությամբ մեթոդը կիրառելիս գրանցումները գրատախտակին կարող է կատարել ուսուցիչը կամ աշակերտներից մեկը:

Հաջորդ գծապատկերում ներկայացնեմ մտագրոհ մեթոդի կիրառման մի օրինակ, որը իրականացրել եմ յոթերորդ դասարանի հայոց պատմության դասաժամին: Դասարանում գրատախտակին գրել ենք մտագրոհ բառը և աշակերտները իրականացրել են մեթոդը:

[11] ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐՆԵՐ, Երևան, 2020թ

[12] ՈՒսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ



Գծապատկեր 1 *Աշոտ II թագավորի ներկայացումը մտագրոհ մեթոդով*

Իսկ երբ աշխատանքն ավարտում ենք մեկ այլ մասնակից պարտավորվում է գրառումները ներկայացնել ամբողջ դասարանին: Գրառումները ընթերցվում են բոլորի համար և հետո սկսում ենք դրանք վերլուծություն անել:

Հաջորդ մեթոդը, որը դասը սկսելու շատ հայտնի հնար է դա ԳՈՒՍ մեթոդն է[13]: Դասասկզբում գծում եմ Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում եմ՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո դիմում եմ աշակերտներին հետևյալ հարցով՝ ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում եմ՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում եմ ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

[13] ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐՆԵՐ, Երևան, 2020թ



Հաջորդ մեթոդը «հաստ» և «բարակ» հարցերի աղյուսակն է, որը միտված է գիտելիքների ստուգմանը, ապա համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Նյութը ուսումնասիրելուց հետո հաճախ դասարանը բաժանում եմ խմբերի և առաջարկում եմ լրացնել նմանատիպ աղյուսակ: Կառուցվածքը ներկայացված է հաջորդիվ:

«հաստ» հարցեր	«բարակ» հարցեր
Բացատրեք ինչ՞ու	Ո՞վ
Ինչ՞ու եք մտածում, որ ...	Ի՞նչ
Ո՞րն է տարբերությունը ...	Ե՞րբ
Ենթադրենք՝ ի՞նչ կլինի, եթե ...	Ճ՞իշտ է արդյոք
Ի՞նչ, եթե ...	Ինչպե՞ս անվանել

Այսպիսով, պատմության դասերին կարող ենք կիրառել տարբեր տեսակի մեթոդներ քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով: Այս մեթոդները կնպաստեն, որ աշակերտները կարողանան օբյեկտիվորեն գնահատել սեփական և այլ մարդկանց մտքերը, համակողմանիորեն ստուգեն բոլոր առաջացած դիրքորոշումները և եզրակացությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ թեմայի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ասել, որ պատմության դասերին կիրառված մեթոդները և հնարները նպաստում են աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը:

Քննադատական մտածողությունը օգնում է մարդուն որոշել իր առաջնահերթությունները անձնական և մասնագիտական կյանքում, ստանձնում է անհատական պատասխանատվություն կատարած ընտրության համար, բարձրացնում է տեղեկատվության հետ աշխատելու անհատական մշակույթի մակարդակը, ձևավորում է վերլուծելու և ինքնուրույն եզրակացություններ անելու կարողություն, ինչպես նաև թույլ է տալիս զարգացնել երկխոսության մշակույթը համատեղ գործունեության մեջ: Տիրապետելով քննադատական մտածողության՝ մարդը, ծանոթանալով որոշակի գաղափարների, դիտարկում է դրանց իրականացման հնարավոր հետևանքները:

Քննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով առաջարկվում է՝ զարգացնել ինքնուրույն աշխատանքի հմտությունները, դասապրոցեսի ընթացքում կիրառել տարբեր մեթոդներ, որքան բազմազան լինեն մեր աշխատանքի ձևերն ու մեթոդները, այնքան մեծ է հավանականությունը, որ երեխան չի ձանձրանա դասին:

Օգտագործված գրականություն

- Ա. Անափիոսյան, Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական, 2012
- Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնաներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ
- Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ
- Кабанова – Меллер Е.Н. Формирование приёмов умственной деятельности умственного развития учащихся. – М.: Просвещение, 1968
- Клустер Д. Что такое критическое мышление.—М. : ЦГЛ, 2005
- КОСТЯКОВ О.С. , Приемы технологии развития критического мышления на уроках истории и обществознания, Республики Крым
- Dewey J., How we think, Boston, 1910
- http://evolkov.net/critic.think/basics/delphi.report.html 25.09.22
- https://xn--j1ahfl.xn--p1ai/library/tehnologiya_razvitiya_kriticheskogo_mishleniya_na_uroka_193114.html 27/09/22